Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության. վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289883 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<30>> 09 2021թ. 7-13- 14816 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Դավիթ Անտոնյանի ՄԴ/79528-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 129 տան բնակիչ Դավիթ Անտոնյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289883 որոշումը նշելով, որ իրավախախտումը կատարել է ավտոմոբիլի անսարք վիճակում գտնվելու պատճառով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289883 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում **իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 3.16, 3.20, 3.22, 3.24 և 3.26 - 3.30 նշանների ազդեցությունը տարածվում է՝ նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհներին մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական

իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289883 որոշման հիմքում դրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Բաղրամյան – Պռոշյան փողոցների խաչմերուկի հատվածում 07.08.2021թ. ժամը՝ 12:08-ին տեղակայված է եղել ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ 3.27 <<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանի ազդման գոտում, ինչը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ինչ վերաբերվում է հարկադրված կանգառ կատարելու հանգամանքին, ապա <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում, երբ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում ստեղծված նյութերի ուսումնասիրությամբ չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը հարկադրված կանգառ կատարելու հանգամանքը ապացույցների բացակայության պատճառով, հետևաբար վիճարկվող որոշումը բեկանման ենթակա չէ:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ <<Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝ կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>, իսկ նույն որոշման 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ <<Վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի «Վթարային կանգառ» ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝ կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>:

Նույն որոշման 83-րդ կետի համաձայն կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում կանոնների 22-րդ և 23-րդ կետերի պահանջները կատարելուց հետո վարորդը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 25-րդ կետի համաձայն՝ արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289883 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Դավիթ Անտոնյանին:



Ե.Կարապետյան

Կատարող Ռ.Ավետիսյան
Հեռ. 060838402